

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խւրախակիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—Ար-
տիստները ՆԱՄԱՍԻՒՆ: Նամակ Թիֆլիսից:—Հե-
ղինքները:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱ-
ՎՈՒԹԻՒՆ: Վիճակները գծաւորներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արքայաթ օր, 4-ին մարտի, զինքնակա ժամը մե-
կէ կէսին, Թիֆլիսի Գլխավոր փողոցի վրա
գտնվող Սարգսի վրէժի շինութեան մէջ, որ կից
է Արքայաթի դռներէն, յանկարծ անգլիս հը-
րոյս յայտնուեցաւ: Հրդեհը կարող էր շատ վտան-
գեղ լինէր: Բայց մի կողմից հրաշք խմբի և պ. բրան-
դի միջոցով քանդակը, միւս կողմից Արքայաթի դռ-
ներէն փոխուեցաւ: Զարմանալի է որ քաղաքային
փարակները թողլէ և տալիս պ. Սարգսի վրէժի ու-
նեակը քաղաքի ամենաանաւոր փողոցում մի
տուն փայտեայ սանդուխտներով, փայտեայ զանա-
գան պատկերներով, որոնց նպատակն էլ ան-
բաւարարելի է: Սարգսի վրէժի այդ ձին տունը մի տե-
սակ ձին պարտական շինութիւն է:

Քանի գնում է «Մեղու» աւելի և աւելի անա-
մօթ է դառնում: Երբ որ մարդը ուղում է իր
պակասութիւնը ծածկել, ինչպէս անհարկ է
նորոգում ուսուցողական հեղինակը կատարելի
վրա, պէտք է ուղղել մեղադրել այն բանի մէջ,
որ մարդը ինքն է անում, կամ արել է: Սպան-
դարեան ինքն անամօթաբար տուտ խօսելով մեր
մասին, ասում է թէ մենք ենք անամօթաբար
ուսուցողական: Նա հետաքննել է «Մեղու» խմբա-

գրութիւնը, իր ասելով, ոչ թէ պահանջած փող
չը ստանալու համար, այլ իբր թէ «Մեղու» և
նրա խմբագրի աչքը հանելու համար: Ինչ
հակասութիւն: Երբ մարդը վճարում է ուրիշ
աչքը հանել, երեւի նա այդ անում է այն պատ-
ճառով, որ մի բանից կամենում է վրէժից իր
նեղ: Իսկ Գրիգոր Արքայաթի ուրիշ շինութեան
ընդհատումը Սպանդարեանից, որպէս զի սա նը-
րանից վրէժից իր լինի, եթէ ոչ չը տալով նը-
րան նրա պահանջած տարեկան 1,500 ռուբլ ու-
ճիկը, որպէս «Մեղու» աղմուկի ստեղծողի,
որի տնտեսը ինչպէս ուժիկի հետ միասին Սպան-
դարեան մեծ ջանք էր անում ձեռք բերելու 1878
թվին: Իսկ Յարութի փարակ էր ուղում գնալ «Մեղու»
հաշուով: Բայց երբ այդ բոլորը չաջողվեցաւ, այդ
երկու անձինք յայտնեցին որ ընդդէմ են «Մեղու»
ուղղութեանը, որին տարիներով համակրում և
թղթակցում էին և երկուսն էլ սատարի ատում
էին «Մեղու» և այս վերջինիցն էլ միշտ ամե-
նաանվարել ծաղրածութեան առարկայ էին լինում:
Այժմ երբ Սպանդարեանը իր «Թեքած լիցում է»
այսինքն Սիմեոնեանցի մօտ է աշխատակցում,
«Մեղու» է քննում է դրամ, որտեղ նրան անդա-
դար անպատուում էին,—այժմ այդ մարդը այնտեղ
է հասել, որ մեղ է մեղադրում թէ մենք ուսու-
նեք խօսում: Պ. Սպանդարեան գոնէ փորը ինչ
ամաչէր, յիշելով որ իրան, որպէս յայտնի արիս-
տօրաբան, վայել չէ այդպէս վարվել, քանի որ
ինքն հասարակ մասկանդոններին պէս մի և է
զիւրաբար որդի չէ, այլ երեւի հայտնի իշխանների
յաջորդն է, ինչպէս ինքն նկարագրել է «Մեղու»
մէջ:

«Մեղու» ներկայ համարում տպում ենք պ.
կրօնի հետաքրքիր թղթակցութիւնը Վիճակից,
այնտեղի մի շատ նշանաւոր և շատերի համար
շատ օգտակար մի հիմնարկութեան մասին:
«НОВОСТИ» լրագրում գտնում ենք մի յորդանոս

մասնով մասին, որտեղ նկարագրված է ամեն-
րեւի թերթի աշխատակիցների, ամենօրեայ լը-
րագրի խմբագրի, գրաշարների և ուրիշ աշխա-
տողների գրութիւնը Ռուսաստանում: Ս. Պետեր-
բուրգում և Մոսկովայում հրատարակվող ամեն-
օրեայ լրագրից, յայտնի չէ ինչ պատճառով,
երեւի մրցութիւնից զրկված, սովորութիւն են առել
անպատճառ ամեն օր հրատարակել, այն ինչ
Անդրկայում, որտեղ աւելի շատ հասարակական
հարցեր կան, ամենօրեայ թերթերը չաբաթը
միայն 6 անգամ են հրատարակվում: Իսկ մեզ
անձամբ յայտնի էին ամենօրեայ թերթերը Շվեյ-
ցարիայում, որտեղ չաբաթը հինգ անգամ էին հը-
րատարակվում: Հրատարակվելով չաբաթը և օր
անգամ ուսաց մեծ թերթերը, ասում է «НОВО-
СТИ» լրագիրը, կատարելագոյն չաբաթում են
թէ իրան խմբագրին, թէ աշխատակիցներին և թէ
գրաշարներին ու գրողներին: Լրագիրը խորհուրդ
է տալիս ուսուց մեծ լրագիրներին չաբաթը վեց
անգամ հրատարակել և չաբաթվայ ընթացքում
մի օր հանգստութիւն տալ լրագրի բոլոր աշխա-
տակիցներին և տպարանի բանուորներին: Եւ ճշը-
մարիտ եթէ Անդրկայում, որտեղ հասարակական
կեանքը շատ հարուստ է և անհրաժեշտ պահանջ կայ
ամենօրեայ թերթի, դարձեալ ամենօրեայ թերթը
անհրաժեշտ է չաբաթը 6 անգամ հրատարակվող
լրագրի, ինչ հարկ կայ, միայն, Ռուսաստան-
ում, ասում է «НОВОСТИ» լրագիրը: Հրատարակել
թերթը չաբաթը 7 անգամ, լրջելով համարները
այնտեղի երեւի լուրերով, որ «Բիսմարկը միտել
է» կամ «այս ինչ տեղ մի դիակ է գտնվել մի
անշարժ մարդու» կամ «այս ինչ պաշտօնական
հիմնարկութեան քարտուղարի օգնականին ամա-
կան ուժիկը երկու ռուբլ և յիսուն կոպէկով աւե-
կացրած է»: Կարգաւորվ ուսուց լրագրի այդ յօդու-
ած մենք էլ ախտայ յիշում ենք որ մեր բաժա-
նորդները ունեն խնդրում էին որ մենք «Մե-
լու» վեց անգամ հրատարակենք: Մեր կեանքը ա-
ւելի էլ աղքատ է, քան թէ Ռուսաստանից: Մի-

թէ դրա համար պէտք է հրատարակենք հայոց
լրագիր չաբաթը վեց թէ օր անգամ, որպէս զի
անդադար պատասխանենք զանազան ստախոս և
անվայել անձնական յարձակումներին, այնպիսի
մարդկանց, որոնք ոչ ամօթ, ոչ խիղճ ունեն: Ոչ,
հայերի համար դեռ երկար ժամանակ չաբաթ
հինգ անգամ լրագրի հրատարակելը կատարելա-
պէս բաւական կը լինի, եթէ անդկական լրա-
գիրներն էլ միայն վեց անգամ են հրատարակ-
վում: Հայը սովոր էլ չէ աշխատանքին: Անդ-
կայում չաբաթվայ ընթացքում մի օր են տալիս
հանգստանալու, իսկ մենք տալիս ենք չաբաթվայ
մէջ երկու ազատ օր մեր լրագրի մէջ բոլոր աշ-
խատողներին:

Հնորակալութեամբ ստացանք Վ. Պօլի «Միա-
ցեալ ընկերութեան» հրատարակած փոքրիկ գը-
քովը «Մանր ուսմանը քրիստոնէական հաստոյ»
վերնագրով: Գրքովը տպված է այս տարի Վ.
Պօլի մէջ, Զարդարեանի տպարանում:

«Պակի» մի թղթակցութեան մէջ կարդում
ենք հետեւեալ տողերը: «Մայրենի սուրբ եկեղե-
ցոյն իբր պաշտպան հանդիսացած «Մեղու» լրա-
գիրը իր ներկայ տարվայ համարներում մատնի է
փաթեթել «Մեղու» մի դրոճը, որ նա հայոց ընդ-
հանրական կաթողիկոսի մասը, իբր թէ չը յար-
դելով, իր թերթերը սե չըջանալներով չէ պատե-
լի: Եւ այդ անհրաժեշտ լինելուն մենք չենք հակա-
ռակում, բայց թէ մի հակառակ իրողութիւն շատ
է հետաքրքրում, այդ այն է, որ լրագրի ուղու-
թիւնը սե ու կարմիր չըջանալով չէ որոշվում
միայն, այլ թէ նրա անկեղծ և անաչառ բռնած
դիրքով է ճշդը որոշվում: Ինչ միտքաբանութիւն
է որպիսի մի ազգայն ուղղութիւն կարող ենք
համարել «Մեղու» սե չըջանալը, երբ որ մի և
նոյն թերթերի էջերում էլ տուրք աթոռի սեպհա-
կանութիւնները և նրա վերաբառ հայրապետի
գանձն ու կայքերը յափշտակողներին անխիղճ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻՃԱԿԱՆ ԳԺԱՏՈՒՆԸ

Յարմար առիթի սպասում էի Վիճակայի գծա-
տունը մտնելու:
Յիմարանոց մտնելու համար մի մարդ երկու
տեսակ տրամադրութիւն պէտք է ունենայ, առա-
ջինը խնդիր պէտք է լինի, երկրորդը՝ յիմարանո-
ցի տնտես տնտարանը ստանալու օրինակում անա-
նելու և յետոյ նկարագրելու յօդարարական հետա-
քննութիւն: Այս վերջինը զիստ ստիպեց: Վիճա-
կայի յիմարանոցը այցելելիք, տեսայ ամենայն ինչ
բարեխախտաբար առանց խնդիրներու դուրս և
լայ, և այժմ խեղճ գլուխ հաւաքած մի բոս
միջոց պիտի պատմեմ տեսածներս:

Վիճակայի առողջատան նկարագրիւր արած մի-
ջոցի խոստացել էի նոյն շինութեան մօտ գտն-
ված յիմարանոցի պատկերը նկարագրելու: Չը
գիտեմ թէ առհասարակ կարողանում եմ յայտ-
նել թէ ոչ, բայց նոյն իսկ տնտես կամ լուրջ մի
բան նկարագրած ժամանակը անգամ իմ միակ
բաղձանքս եղած է ընթերցողը չը տրամեցնել, և
ձեռքիս եկածին չար նորա չըթանցը վրա դնել
փախտական մի ժպիտ թողնել: Այս այս դի-
տարութեամբ սկսում են նկարագրել:

Վիճակայի քաղաքային յիմարանոցը լայնատա-
րած և աշտան մեծութեամբ և չորս կողմը բարձր
պարիսպներով շրջապատուած մի պարսիկ մէջ-
տեղում շինուած է: Ենթեր երեք յարկանի և ճը-
մարիտ հողակալ մի պարսիկ տեղն ունի: Պար-
սիկը այնքան մեծ է որ չորս բոլորակը հողի
10 վարկներով կարելի է շրջապահել:

Նախ քան ներս մտնելս, չը մոռանամ յիշելու,
որ ընդհանուր հիւանդանոցում մի բարեկամ բժշ-
կից անցանքով առած ունեի: Սոյն անցանքով

ձեռքումս, ներկայացայ պարսիկի դռնապանին
և նա ինձ ցույց տուաւ դռնապան շինքին դռնա-
պանին դռնապան ձեռքումս: Գնացի նրա մօտ, նա
էլ յիմարանոցի ընդհանուր անօրէն պրօֆեսոր
Շըլակի մօտ գնաւու համար իր օգնականը ինձ
ընկերակցուց, այս ուղեցուցին հետ ի միասին
24 աստիճան լայն մարմարեօն սանդուղիներից
բարձրանալով և օճապոյտոյ նեղ անցքերից անց
ու դարձիւր անելով, հասանք անօրէնի դռնապան-
կի նախասենեակը: Մինչ այնտեղ հասնելս, նա-
խազգուշութեան օրինաց համաձայն՝ աջ ու ձախ
դռնում էի վախճանալով թէ մի խնդիր չը հանդի-
պեմք, բարեխախտաբար մի խելօք արարածի ան-
գամ չը պատահեցանք: Ուղեկիցս բաց արաւ
դուռը և մտայ անօրէնին սենեակը: Աւելորդ է
նկարագրել խուցին, սրահին և դռնապանակին չը-
քեղազարդ կահկարամքը, որովհետեւ խնդիր
փրկի՝ մի իմաստուն պրօֆեսորի արժանապա-
հանքով եր: Ըստ սովորութեան անուանս, դը-
ժիս և այցելութեան նպատակիս տեղեկանալուց,
յետոյ պրօֆեսորը ինձ մի արժու առաջարկեց,
նստայ: Տնօրէն պրօֆեսորը, բառին բուն նշանա-
կութեամբ պատկանելի մի ձեռնարկ էր մօտ 75
տարեկան: Փառաւոր և ձիւնի նման սպիտակ
մօրուքը կտրծելն կէսը ծածկել էր: Գէթին վրա
տեսնվում էին ուղեղներ ուսումնասիրելու մէջ ու-
նեցած առաքինազարդ համբերութեան և անխնայ
աշխատասիրութեան թողութեան հետքերը, իսկ
լայն և բարձր ճակտին վրա՝ կարծես դրոշմված
լինէր մարդկութեան թշուառութիւնը մեղմացնե-
լու համար յանձն առած վսեմ պարտականու-
թեան կնիքը:

Սկսանք խօսել, այսինքն գերմաներէն: Տակաւին
ինձ անձամբ և անթիւ անհամար բաղաձայնե-
րով խոսուած գերմանական լեզուի մէջ ունեցած
անվարժութեամբս երբ սկսայ յիմարանոցի վրա-
յօք բաներ խօսել, պրօֆեսորը աւելի բերան, թէ և

ինձ ոչինչ չասաց, բայց գոնէ ես կասեմեցայ
որ նա զիս յօժար կամօք յիմարանոցն եկած մի
խնդիր կարծեց, յետոյ կէսը գերմաներէն, կէսը
ֆրանսերէն հակադրել թէ հայ եմ, շատ նեղու-
թիւն կրեցի մինչև բացառուցել թէ հայը ինչ
բան է, վերջապէս հոգիս դուրս եկաւ: Մինչ հաս-
կացելի որ հայերը 4 միլիօնից աւելի մոզովորդ
են, մեծագոյն մասը Տաճկաստանում, Ռուսաս-
տանում և Պարսկաստանում, իսկ փոքրագոյն
մասը Եւրօպայում են, այսպէս են, այնպէս են,
Վ. Պօլսում մի մեծ յիմարանոց ունեն և այլն:
Զարմանալին այն է որ Եւրօպայում հայը մակե-
րեկից ճանաչող, և քիչ թէ շատ անցեալին,
ներկային ծանօթ եղող մարդ համարեա չը գը-
տնուի: Ճանաչողը կամ խորը թափանցած է, այն-
պէս որ դժուար թէ մի անարատ հայ այնքան
գիտնայ, կամ չը ճանաչողն էլ այն աստիճան
անտեղեկ է որ հայու խօսքն անես, նա կը կար-
ծէ թէ ուտելու մի բան է:

Տակաւին յիմարանոցը մանգալու չը սկսած մի
զազափաթ կարողացայ ունենալ խնդիր մասին,
երբ պրօֆեսորը ինձ մի վարդ ընծայեց: Վարդը
ձեռքս առածիս պէս խելօք քիչիս տարայ ընա-
կան ծաղիկ կարծելով, մինչդեռ արուեստական
մի ծաղիկ էր, խնդիրների յատուկ արուեստանոցի
աշխատութեան արդիւնք:

Պրօֆեսորը կանչել տուաւ յիմարանոցի տե-
նակները վարակացուն, և զիս նրան յանձնարա-
րեց որ հետը մանգալ և պատուիքից որ ինձ
ցույց տայ բոլոր մանրամասնութիւնները: Հնոր-
հակալութիւն յայտնելով պրօֆեսորին, դուրս ե-
լայ վերակացու առաջնորդին հետ ի միասին, և
սկսանք այցելութիւնը:

Նախ գնացինք շինքին առաջին յարկը հաս-
տատուած գործարաններում, ուր խնդիրը կամ
լաւ ևս խելօք խնդիրը աշխատում էին ամե-
նայն տեսակ ձեռակերտ և արուեստական պա-

րագմունքներով: Վերջը չը գար, կի՞նք մի առ մի
կամենամ նկարագրել այն նորը դեղաբուստա-
կան բաղամասեակ իրեղենները, զոր շինում են
խելագարները. մարդ զարմանում է, զմայլում է
և աչքովը տեսածին չէ ուղում հաւատալ, երբ
վարդները կարգաւ ցույց են տալիս իրանց ա-
րուեստաւոր խնդիր աշակերտաց ձեռագործները,
որոնք Վիճակայի հարուստ խանութների գեղա-
րուեստական իրեղեններից պակաս յարգ և արժէք
չունին: Սոցա մէջ ինչ ասես կան՝ կարծեցեալ
թղթից շինուած անասուններ, փոքրիկ արձան-
ներ, պղնձից, կապարից, զանազան մետաղից
քանակազարդուած կիսաքանդակներ, ոսկեզօծ շը-
ջանակներ, ապարանջաններ, օղեր, մանեակներ,
կանանց համար այլ և այլ գարդարանքներ, ժա-
մացոյցներ, թատրոնի դէկորատիւներ, ծաղկամա-
ներ և այլն և այլն: Բոլոր այս ձեռագործները
նրեթերը մատակարարում է յիմարանոցի վարդու-
թիւնը, իրեղենները ծախվուց յետոյ նրեթերի
գնիւրը դուրս գալով մնացած գումարը սակաւ առ
սակաւ յանձնում են շինողներին: Ուրիշ շատ
գործարանների սրահներ այցելեցինք, ուր խն-
դիրը կատարեալ հանդարտութեամբ և առանց
խնդիրութեան մի նշույն անգամ արտայայտուել
նստած բանում էին: Այս բանը ինձ շատ զար-
մացրեց, և քանիցս հարցրի առաջնորդին թէ ինչ-
պէս կարելի է սրանց խնդիր տեսել, նա միշտ
պատասխանում էր որ ամենքն էլ խնդիր են: Յե-
տոյ առաջնորդս ինձ տարաւ յիմարանոցի եկե-
ղեցին, բաւականի մեծ մի մատուռ էր, ուր երե-
սեռ խնդիրները աղօթում են օրը երկու անգամ,
բայց մի խնդիր և խելօք աստուածապաշտու-
թեան եղանակի միջև ինչ զանազանութիւն կա-
րելի է լինել, դրան իմանալը աստուածաբանա-
կան հարց է: Ես միայն հարցրի առաջնորդին
թէ ինչպէս կարծիքն խնդիրը, «հետաքրքրական
մի բան չէ, կաղօթման, կը խօսեն, երբեմն էլ կը

գործունէութիւնները սպիտակ վարդուրի տակ քողարկելու է ձգնում և միանգամայն զանցառութեան տալու է դրոշմ և քարոզում: Եւ դա մեղք է համարուում:

Ինչպէս երևում է «Պատկ» լրագիրը հետզհետեւ աւելի և աւելի համակրութիւն և ժողովրդակա-նութիւն է ստանում հայ հասարակութեան մէջ: Ձաքմանալի է որ նոյն «Պատկ» մինչև որ «Մե-ղու» պէս խառնարանէր և յետագայ ուղղութիւնն էր հետեւում, ամենին համակրութիւն էր վայե-լում հայ հասարակութեան կողմից: Իսկ այժմ, երբ յանկարծ աղտոտմիտ ընթացքը բռնեց, ամեն կողմից համակրական ցոյցեր է ստանում:

«Պատկ» մէջ կարգում ենք հետեւեալը: Որ-քան էլ լրագիրները բողոքեն սոցիալ տիրացուներ ձեռնադրելու դէմ, որքան էլ մեծ չարիք ու ծանր բեռ համարեն ժողովրդի համար քահանաների թիւի աճելը, այնու ամենայնիւ նրանց թիւը չէ պակասում:

Նոյն լրագիրն գրում են վաղարշապատից: «Որբորում» Ողբասայի Խորասանձեան քահանայից Սինոդը ստացել է Մանկունու փողերի մի նոր ցուցակ: Այդ այն փողերի ցուցակն է, որոնք քա-հանայի ձեռքով են ուղարկված զանազան բան-կեր: Գումարն է 13,000 ռուբլ: Ստացվել են նաև մի քանի թանկագին մատակներ, որոնցից մէկը մօտ 1,500 ռուբլ արժէ:

Ներսիսեան զարոյի տեսուչ պ. Պետրոս Սի-մոնեանցին, ինչպէս լսում ենք, հոգաբարձութիւ-նը ուղղում է հեռացնել տեսչի պաշտօնից և մի ուրիշին նրա տեղը նշանակել: Եւ ահա Սիմո-նեանց սկսում է գործ դնել հետեւեալ միջոց: Մի կողմից նա տպում է «Մեղու» մէջ այս կամ այն հոգաբարձուի անձնաւորութեան դէմ հայ-հայաբնակների նիստակ, որպէս զի իր ոյժը ցոյց տայ և վախեցնի, իսկ ուրիշ կողմից, նոյն համարում իր խորին արհամարհանքը յայտնում է դէպի թղթակիցը և իր յարգանքը նոյն նկարա-զրկած հոգաբարձուի անձնաւորութեանը, որի մի ձայնը խորհրդի մէջ այս կամ այն կողմը հակվե-լով, կարող է վճռել Սիմոնեանցի հրաժարակա-նը դրական կամ բացասական կերպով: Ահա ինչ միջոցներ են գործ դնում Սիմոնեանց, Սպանդա-րեանց և ընկերութիւն: Նրանց համար ամեն մի-ջոցը լաւ է:

Ժիծաղին, ասաց ինքն էլ ժպտելով: Նաև ուղե-ցայ խնամալ թէ արեւօք պատարապիչ քահանայ-ներն էլ խնեթ էին. այս միամիտ հարցին առաջ-նորդս այնպիսի բարձրաձայն մի ծիծաղ արձակեց որ եկեղեցւոյ դմբէթի արձագանքը ծիծաղի ձայնը կրկնեց, և աւելացրեց. ո՞վ է խնամում, թերևս սրանց աղօթքը Աստուծոյ առաջը աւելի ընդու-նելի լինի, որովհետև զոհե անկեղծ լինելուն կատակած չը կայ ասաց՝ խնեթերի գլխաւոր պա-հապանք:

Եւ մեծ անհամբերութեամբ շարունակ առաջ-նորդին ասում էի թէ երբ պիտի տեսնենք ձմա-րիս խնեթերը, որովհետև մինչև հիմայ տեսածս խնեթերից ոչինչ չը հասկացայ, իսկ նա՝ կարգաւ ամենայն ինչ ձեռք ցոյց պիտի տամ ասելով, ինձ դուրս հանեց մատուռից և տարաւ մի ուրիշ սը-րան, ուրտեղ տեսայ որ խնեթերը նկարում էին, միմեանց պատկերն էին քաշում, վարպետների պատկերներն էին օրինակում, մնացի աղաչած: Տե-ղեկացայ նաև որ նոյն սրահում, բարեկենդանի և տօնի օրեր նոյն իսկ խնեթերից բաղկացեալ նուագաժողովներ կրթաշտական ձայնակցութեամբ խնեթերը, արու և էգ, միմեանց փաթաթում կը պարեն եղեր: Գծաթաթաբար խնեթերի այդ տա-րօրինակ հարսանիքը չը տեսայ, որովհետև նոյն օրը այն տեսակ հանդէս չը կար:

Բայց պէտք է դիտարկ որ մինչև հիմայ տեսած և նկարագրած խնեթերն կիսով չափ առողջացած, կամ խելքի հիւանդութեան թեթիւ տեսակին են-թակայ եղած դատակարարիցն էին: Այժմ պիտի մտնենք յիմարանոցում նոր եկած խելագարներին և կատաղի խնեթերին սենեակները, որոնք չէն-քին առաջին յարկը, այսինքն տղամարդոց յատ-կացեալ մասը կը կազմեն:

Առաջնորդին հետ որտեղից ներս մտանք և ինչպէս դուրս եկանք, եւ չը կարողացայ մտքումս պահել, որպէս զի ընթերցողն էլ նկարագրու-

ԲԱՅՈՒՆԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Մեր քա-ղաքը եկած տաճկանստանցի ձերմակեան վարդա-պետը իր քարոզներով միջնադարեան գաղա-փարներ է քարոզում: Օրինակ, անցեալ կիրակի, նա մի քարոզի ժամանակ, ի միջի այլոց, անխնայ կերպով յարձակվեց հայ լրագրութեան և թա-րօնի վրա: Նրա կարծիքով լրագիրը չարժէ կար-գալ, որովհետև մամուլը միմիայն անբարոյակա-նացնում է մարդուն, թատրօնն էլ մի անբարոյա-կան տեղ է և հին հռոմայեցիներին ևս դէպի կո-րուստ է տարել: Շնորհաւորում ենք դիտակա-ն հօր միջնադարեան գաղափարները:» Մենք մեր թղթակցի հետ համաձայն չենք որ իր թէ ձեր-մակեան վարդապետը միջնադարեան կարծիքներ է յայտնում: Նա գուցէ ծայրագիտութեանն է համարում իր մտքի մէջ, բայց շատ անգամ պատահում է որ թատրօնը անբարոյականացնում է ժողովուրդը, երբ անպարտ աշխարհի պիւնտներ է տալիս, օրինակի համար, որոնք հանդիսականի միմիայն անասական զգացմունքն են դարձեց-նում, կամ այնպիսի պիւնտներ, որոնք սխալ, միջնադարեան, խառն մտքեր են քարոզում ժո-ղովրդին: Շատ անգամ մամուլն էլ, լրագիրն էլ անբարոյականացնում է ժողովուրդը, երբ անպա-րտ զրպարտում է ամեն լաւ բան, ոտնակոխ է անում ամեն բարձր դրացիունք, անամօթարար է խօսում, ընտելացնում է ամբողջ խառնը, չողորթութիւն է ազդու և մոլեռանդ ժողովրդի բո-ւր վատ կրքերին, բոլոր նախապաշարմունքներին, սովորեցնում է նոր սերունդին ամեն անեղիւնի միջոց տուր համարել, որպէս զի միայն զիտի իր հակառակորդներին: Այդ տեսակ դէպքում մենք կատարելապէս համաձայն ենք որ մամուլը անբարոյականացնում է ամբողջ և աւելի լաւ կը լինէր, ի հարկէ, որ ամենին լրագիր չը լի-նէր աշխարհիս երեսին, քան թէ լինէին ան-բարոյականացնող լրագիրներ, ինչպէս օրի-նակ «Москов. Вѣдом.» ուսանիւրի մէջ, կամ «Մեղու Հայաստանի» հայերի մէջ: Նրանի բա-ղադրները և մեր թղթակիցը լաւ բնութեան ձերմակեան սուրբ-հօր քարոզը և այնուհետև միշտ գիտակցական կերպով զննելիս, խտուրթեալ քն-նութեան տակ գցելին թէ որ թատրօնական գը-րուածք բարոյական է և որը անբարոյական, որ լրագիրը բարոյական է և որը ինքն անբարոյական ու իր ընթերցողներին անբարոյականացնող: Ամեն բան կարող է կամ բարոյական կամ անբարոյա-կան լինել: Օրինակի համար ձերմակեանի քարոզը բարոյական է, որովհետև անուղղակի կերպով խելքը գլխին մարդուն ընտելացնում է գիտակ-ցութեանն ու ինքնաձանաչութեանը, բայց կարող

թեանս հետ կարողանում ման ածել տալ այն-բան բազմաթիւ անցքերից, գաւթներից, սրահ-ներից, ննջարաններից մտանք եկանք, միայն այս-քանը կարող եմ ասել որ առանց ձեռքի բանա-լինելը գործածելու առաջնորդին հետ մի տեղ չէինք կարողանում մտնել, հետեւաբար եթէ ա-ռաջնորդս կորսնցնէին, բանս բուրդ էր, այն բա-բիւրնիկով մէջ պիտի մուտքուէի և միանգամայն պիտի բանտարկուէի:

Յիմարանոցում պատկարարած խնեթերի թիւը հասնում է 776-ի, որոնց 430 տղամարդիկ են, իսկ մնացորդը կանայք: Թէ տղամարդոց և թէ կանանց մասերում սենեակները երեք կարգի բա-ժանուած են: Առաջին կարգը օրական 5 ֆիօրին է (մօտ 4 ռուբլի 25 կօպէկ) ուտել, խմել, ճրագ, կրակ, դեղ, և դիչերները դատ անկողնով խնեթին մօտ պառկող խնեթապահին վարձքն էլ ի միա-սին *): Երկրորդ կարգի սենեակին դիմն է օրա-կան 2 ֆիօրին 40 քրքրաբար, բայց երկու հիւանդ մի սենեակում, երրորդ կարգի դիմն է 1 ֆիօրին, չորս հիւանդ մի սենեակում, իսկ աղքատաց համար մեծ սենեակներ կան, որոնցից յարաբան-չիւրում վեց վեց հիւանդներ կը դարձանուին ձը-րիւրար *):

Յիմարանոցը ունի 10 առօրեայ դարմանիչ բը-միչներ, որոնց ամենալիւսաւորը Professeur Schlager ընդհանուր տնօրէն և բժշկագետն է: Այնուհետև Dr. Hohler կանանց բժշկագետը, Dr. Gauster տղամարդոց համար: Կայ նաև հօշակա-ւոր Dr. Leidersdorf խնեթերի բժիշկը, որ 1876-ին Կ. Պօլիս կանչուեցաւ նախկին սուլթան Մուրա-

*) Աս հաշուից երևում է, որ վիէննայում խնեթեանը աւելի ածան է, քան թէ հիւանդա-նալը, որովհետև առողջատան առաջին կարգի սենեակը օրական 15 ֆիօրին կարծէ:

*) Բացառութիւն կազմելով օտարազգիք:

են լինել և անբարոյական քարոզներ: Եւ ձմարիս հայերի մէջ կազմվել է այնպիսի համոզմունք որ բաւական է մի լրագիրն հայոց լեզուով հրատա-րակվել, որպէս զի նրան բարոյականացնող հա-մարենք, մինչև անգամ տօններ քսան և հինգ ա-մեայ յօրեկանը այնպիսի լրագրի որ իր ամբողջ գոյութեան ժամանակ պատրաստեց մի անբարո-յականացրած սերունդ: Միթէ բաւական է որ հայոց լեզուով թատրօնական ներկայացում տրվի, որպէս զի համարենք թատրօնը ա-մենաբարոյական: Բայց դուցէ տրվող պիւնտն անբարոյականացնող է, ինչպէս մի խառնարանի մամուլի իւրաքանչիւր յօդուածը անբարոյակա-նացնող է, քանի որ թէ ժողովուրդն և թէ վատ լրագրի նպատակն է խառնարկել մարդուն, գը-րուել նրա մէջ ստոր ինտելիկաներ, մոցնել ամ-բողի մէջ ամեն տեսակ բարոյական արտեր: Եւ այդ տեսակ անբարոյականացնող մարդիկ ապա-կայ սերունդներից միշտ անէծքով են յիշվում: Մի երեսուն, քառասուն տարի առաջ Ռուսաստանում հրատարակվում էր մի լրագիր, որի անունն էր «Հիւսիսային Մեղու»: Այդ լրագրի խմբագիրները պ. պ. Բուլգարին և Գրէշ, որոնք իրանց ժամա-նակին յարգված անձինք էին երևում, այժմ ուրիշ կերպ չեն յիշվում ամեն աղին մարդոց, եթէ ոչ անէծքով: Ինչի, — որովհետև Բուլգարինի և Գրէշի անունների հետ կապված է խռովութեան, երկ-պառակութեան, խառնի, տղիտութեան, ֆանա-տիկութեան, մատուցութեան, բամբասանքի, սը-տուքեան, զրպարտութեան գաղափարը: Հայերը ունեն այս բոլորիս իրանց «Մեղու», որի խմբա-գիրները, Սիմոնեանցի և Սպանդարեանցի անուն-ները, ապագայ սերունդը նոյնպէս ամենախորին զղուանքով կարտասան, նոյն զղուանքով, որով ամեն աղին ուտող արտասանում է Բուլգարինի և Գրէշի անունները: Վարդապետ ձերմակեանի ա-ռաւոր շատ ուղիղ է. լրագիրը կարող է անբա-րոյականացնող լինել և հետեւանքներ մնալ մեր հասարակութեան մէջն ենք տեսնում, մեղուական-ների կուսակցութեան մէջ:

Հրատարակվեցաւ «Աղբիւր» մանկավարժական ամսագրի երկրորդ, փետրվարի, տեսարկը: Այժմ ամսագիրը տպւում է Մարտիրոսեանի տպարա-նում: Ամսագրի ձախառը ներկայացնում է մի գե-ղեցիկ պատկեր, որ, ինչպէս մեզ ասել են Վա-րդապետի մէջ գտնված Ջրաբերդի պատկերն է: Մի աղբիւր դուրս է գալիս մի բարձր ժայռից, որի գագաթին մի աւերակ բերդ է երևում և ընկ-նում է մի խոր և նեղ ձորի մէջ: Պատկերը շատ նկարչական է: «Աղբիւր» փետրվարի տեսարկը

զի ուղեղի հիւանդութիւնը դարձանելու համար: Ահա տարակ ամեն կարգի սենեակներին մաք-րութիւնը, մեղրամոմեալ տախտակամածին փաշ-լը, պատուհանների ապակիներին թափանցիկ յտալակութիւնը, լայն լուսամտաներից մտած լոյսը, յղեկալ և ամբիւն անկողնիներին վայելչու-թիւնը, պատերին ձերմակեղեններին, ստաններին պայծառութիւնը վերին աստիճանի նախանձելի էին: Որ և է տխուր և թափառվեց մի բան չէր մար մանաւանդ խնեթերին, որոնց հիւանդ ուղեղը աւելի ընդունակ և գիւրազգիւր է:

Յիմարանոցը 1000-ից ասելի հիւանդներ բու-մանդակելու չափ սենեակներ ունի, բայց պա-րագրերն էլ կան: Առաջնորդս, նախ պարտաւորը ինձ ցոյց տուաւ, կարծես ուղում էր ինձ նախ վարձեցնել, պատրաստել, կամ հետաքրքրութիւնս անջնան լարել որ տպաւորութիւնը չափազանց լինի: Այնպէս էլ եղաւ: Ինչպէս ասացի, դուռ-ը կայ որ առանց բանալիի բացուի. բոլոր սե-նեակները, կորիդորները դուռնը միմեանց հետ հարողակցութիւն ունին, բայց ամենքն էլ կող-պուած են. եթէ իւրաքանչիւր դուռը յատուկ բա-նալի ունենայ, հարցանքով բանալիներ չը պիտի բաւականանային, միայն մի զոյգ բանալիով ա-ռաջնորդս բաց էր անում ընդհանուր դուռը:

Եւ ինչպէս մտանք երրորդ կարգի տղամարդոց բնակած սենեակներին մասում: Այժմայ մի տա-րու գզգալի, երբ դիմանք դիմանք դուռնը բաց պահուած բնագրածակ սենեակներին մէջ խառն ի խառն 50-ի չափ խնեթեր տեսայ: Մեզ որ տե-սան ամենքը վերկացան, երկիւղը պատեց զիս, փախչելու յոյս չը կար, եւ կարծեցի թէ մեր վրայ պիտի յարձակուին, բայց ում մտքից կանց-նի: Ընդհակառակը դա քաղաքավարական մի ըն-դունելութիւն է եղել մեզ համար, այսինքն բա-րով եկաք—ի նման մի բան: Առաջնորդս յատա-

շատ լաւ է կազմված: Մանաւանդ իրանց վրա ուշադրութիւն են դարձնում «Մի պատկեր դա-րանային կենսից», «Ամպ», «Հասկուլ» և «Ջրա-բերդ» յօդուածները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 22 փետրվարի
Թիֆլիսի թատրօնաւանդները կերել թէ շատ կարօտ կը քաշեն Պօլսեցի դերասան ու դերա-սանուհիներու: Հաւանօրէն քիչ ատենէն կը տես-նենք ձեր թատրարական լույս տիկին Հրաչեայ և ուրիշներ: Մեր առած տեղեկութեանց համեմատ շուտով Պօլիս կուգայ մի ներկայացուցիչ Թիֆլի-սի թատրօնական Մանասիօղլու կողմէն: Այդ ներկայացուցիչը կըլլայ պ. Վահրամ Մուրադեան: Բայց նայելով այն արտասուցներուն զոր թա-փեցին ոմանք երբ մի քանի Պօլսեցի տղայքներ բեռ եղան ձեզ, կենթադրենք թէ շատ աղքատ վիճակի մէջ ըլլալու էք:—Սակայն տօք. Փէշտի-մաճեան չը հասկնար այս լեզուն: «Աղքատները կըսէ, չեն կարող չնորհել ինքզինքնու օտար թաղաքացի դերասաններու լույս տիկինը, ուրեմն կեղծ են այդ արտասուցները»: Այս արամա-նութեամբ Փէշտիմաճի բժիշկը կը պնդէ թէ Պ-սէն Տիֆլիս երթալիք դերասանուհիք ու դերա-սանք պէտք է ինքզինքնին շատ սուղ ծախեն Պիտի բէքը, բժիշկ Փէշտիմաճին ինչ գործ ունի այս խնդրոյ մէջ:—Հարցուցէք Յարսի: Իրողու-թիւնը ինչ է որ է ան կըսենք: Տիկին Հրաչեայ ինքզինքնը շատ ծանր պիտի քաշէ և պիտի չուզի Պօլսէն մեկնիլ: Եթէ պ. Մուրադեան խաբարուի խաղէն և շատ պնդեց որ տիկին Հրաչեայ ան-պատճառ երթայ Տիֆլիս, այն ատեն տիկին Հրա-չեայ իսկ թէ համար պիտի զիջանի: Բնական է որ տիկինն այս զոհողութեան առջև Տիֆլիսի Մանասիօղլու ինքն ալ բաղադրաւոր ըլլայ և չնորհէ պահանջած գումարը: Ինչ փախուում ժա-մանակի: Ո՛ր են այն օրերը երբ կը տեսնէիք այդ դերասաններն ու դերասանուհիներն Օրթա-պիւր հին, փլած փրկված խանի պէս տան մի մէջ ունեւած: Ո՛չ կրակ ունէին, ոչ ուտելիք, և ձմեռը սաստիկ էր: Տեսարանի վրայ ձայններին մարած էր միշտ, և իրենցմէ մին կըսէր տխու-րութեամբ: Ինչ կուգէք, ձայններին մի քիչ բարձ-րելէ, բայց դիտեք թէ ամբողջ շաբաթ մէջ մի պատառ տաք կը բախուէր չէ մտած բերանն իս, միայն պանիր հացով կը սնանին, և թէ է այդ ալ միշտ գտնենք:

Չացաւ, եւ էլ ետեւից. նա ինձ ասաց թէ կարող եւ նրանց հետ խօսել: Խօսեցայ մի քանիսի հետ, նախ խեղօք սկսում են խօսել, յետոյ փախցնում են: Մինը ասում է թէ—ես քեզ Ամերիկայում եմ տեսել—մուսը,—ինչի համար կինդ ի միտսն չես բերել, մի ուրիշն էլ ասում է թէ, դու քահա-նայ ես, արի ինձ խօստովանա՛ք արաւ, և սրտ նման ուրիշ հաղար ու մէկ խնեթ ու խելաւ բա-նեի էին ասում. եւ սրանց ամենքին հաստատա-կան պատասխաններ տալով հեռանում էի միշտ ծիծաղելով: Առաջնորդս ինձ անխաղաղ տեսած կը լինէր, որովհետև հասկանում էք խնեթերի հետ վարուելու եղանակը, եւ էլ պատասխանեցի թէ, շատ յիմարանոց չեմ տեսել, բայց կենսագրում խնեթերի հետ շատ գործ եմ ունեցել, և դրան կը պարտիմ աշխատանք ունեցած վարձութեանս: Հե-տոյն կարգաւ և շուտ շուտ անցկացանք ամ-բողջ երրորդ կարգի սենեակներից, որոնց մէջ խնեթերը հաղար տեսալ բաներ էին անում, բայց ոչ մի արարքի մէջ հաստատաւոր չարուանկու-թիւն չը կար, կապիկներին նման միշտ թողնելով մի ուրիշ բանով էին պարագուտ, որովհետև տ-քա արուեստանոցի խնեթերի նման տակաւին մասամբ իւրեք չէին առողջացած: Արանք թէ Կա-տաղի խնեթեր չէին, սակայն նոր են, չէ կարելի փտաւիլ, ասաց առաջնորդս: Յետոյ գնացինք երկրորդ և առաջին կարգի սենեակներում: Այժմ երկու մասերում պահուած խնեթերին մեծագոյն մասը 60-ից մինչ 80 տարեկան ցնդած ցնդուած պատաւանք էին: Կային նաև առաջին կարգում առևտրական գործերի մէջ վառարած և խնեթե-ցած բանիկներ, վաճառականներ, որոնց մի քա-նիսը արժեթղթոց (Börse)-ի գնեք հարցրին ինձ. մինն էլ հարցրեց թէ ինչ կարծէ չաքարը, եւ էլ նպատաւոր մի բան ասելու մտօք, շատ ածան է պատասխանեցի, ասաց «յիմար, ոչինչ չես ի-

Ինչու ըսեմք թէ արուեստը բանի մը օգտաւոր է: Ինչո՞ք Պօլսոյ խմբագիրները, արդեօք զոքո՞ւն կը փախազեն զերաւան, կամ լաւ եւ քորտաւանդները եղած ըլլալ:

Աղբարին լուրերը շատ առատ չեն: Ազգ. ժողովը որ ամիս մը սուգ պահեց Վհ. Կաթողիկոսի մահուան ատ թիւ, հիմա ալ ամիս մը ուրախութեան համար նիստ չըբաւ: Պատրիարքը և Սինոդը պէտք չունեն զայնի կարինի մէջ եղած հաշիւին ձեռնարկութեանց համար և խնդրած են որ մնացած 54 բանտարկեալներն ալ ազատուին: Լրագիրը կրնայ ալ արձակուի: Մեր լուսնայեղով երեսնադէմի խնդրոյն վրայ ալ խոստով են: Գեռ անձամբ մանրամասն տեղեկութիւններ չառինք:—

Պօլսոյ թերթերը կը շարունակեն բնորոշել թերթակցութիւններ մի եւ նոյն անձէն զբաղած էջմիածնի շրջակայներէն: Մի եւ նոյն նախնի մը և նոյն առուր մէջ տեսանք «Թէրքիստի» (Մասիսի) և այսօր ալ «Հայքներէ» մէջ, միանալով չին խորհուրդով կը գրուին: Գրողը պարզ գործը մէ, իսկ շարժողը: Երբ պիտի ուզէր կաթողիկոսական այս հարցի մէջ անկեղծ, անչափանդիր, լուրջ թղթակցութիւններ գրել որոյ հաւատք ընծայեցէ:— «Պատկի» փետր. 5-ի առաջնորդող յօդուածին կարեւորութեամբ հոս շարունակու աչքէն չը վերաբեցաւ: Չենք գիտեր թէ՛ այդ յօդուածը պիտի արտատպեն հոս: Եւ միանալով վերաբերեալ կանոնական փոփոխութիւններ կառաջարկէ: Խնդիրը նոր գոյնով կը ներկայանայ և ցոյց կուտայ թէ՛ փոփոխութեան նախաձեռնութիւնը պէտք է մեղմէ դա: Եթէ հոս արտատպուի այդ յօդուածը, այն ատեն Պատրիարքին հարցը ուրիշ կերպարանք կառնէ, և Պօլսոյ հայերն ու Ազգ. ժողովը հաւանորէն գործելու ուրիշ ընթացք կը բռնեն:—Այդ յօդուածը կարգադրեցնելը, զեռ երէկ եկաւ հոս, կը դարձանային և կըսէին թէ, որքան տգէտ ենք այս գործոց մասին: Մենք պարզապէս խաղաղք եղած ենք, վստահ չենք ձեռնարկող աղբարները անտարբեր են և կը ձգեն որ Պօլսոյ խմբագիրը Պօլսոյ որ մեծ ազդեցութիւն պիտի ունենայ կաթողիկոսական խնդրոց մէջ: Կը շարունակեն Մասիսի երկրորդական զոհ ցոյց տալ, որպէս զի համակրութիւն վատակի:—Մանկունի երկրորդականին անդուկներու խնդրոցն ալ հոս կը զբաղին, ոչ միայն հայ թերթերը, այլ օտարներն ալ: Յունաց

մասնում: Շատ կարելի է իրաւունք ունենալ մարդը, որովհետեւ եւ անդրադարձնաւ օգտին և անպիտանութեանը մէջ թերեւ թանգ գնով շարք արած լինելը, ըստ որում իմ օգտին զինս իրան անախտ թուեցաւ: Սրանցից դատ կային նաեւ առաջին կարգի սենեակներում ուրիշ հարուստ ուսուցիչ, սերբիացիներ, լեհաստանցիներ, որոնք երկնայիններն նման գետին վրայ ծաղկապատիկ նստած անմեղ խաղաղութիւն կընդգրկուած:

Յիմարանոցի և հիւանդանոցի մէջ տեղ մեծ տարբերութիւն կայ, որովհետեւ առաջնոց հիւանդները իրանց խնդիրն տեղ չեն, հետեւեալը խնդր չը հակադրուին են, այս պատճառաւ վերջին աստիճանի խոհեմութեամբ և նախազգուշութեամբ ամենայն ինչ անօրինուած է որ և է շրջակայ մի գէպը չը պատահելու համար: Առանց կարգի խտրութեան խաղաղութեամբ սենեակի համար 3—5 պահապան նշանակուած են, համարեա 4—5 խնամի համար մի պահապան կայ: Այն խնամիներն, որոնց վիճակը բարեբաւ է, կամ բարեբաւ է սկսած, խնդիրն ուրիշ սենեակներում փոխադրուած են: Խնամակալներին խնամիներն հետ փոխադրուած մէջ բռնած ընթացքին մարդ հիւանդ է, խնամիներն հետ այնքան զգուշութեամբ, այնքան չափազանց մարդապարտութեամբ չէ կարելի փոխադրել: որքան պահապանները իրանց յատուկ փոփոխութիւններով, հանելի ժպիտներով, քաղցր խօսքերով խնամիներն այսօր, կրկնները զուլանքը շօշափելով, շոյելով, զգուշելով խօսում են, կարծիքներն են անում, այնպէս որ սակաւ ընդ իրան խնամիներն իր վիճակը իրան ծանր և անտախտ է թուում, որովհետեւ, ինչպէս առաջնորդող ասաց, խնամիներն արդեն խնամիներն են, այնուամենայնիւ զուլանք է որ ինքը հիւանդ է, հետեւեալը կրկնելով խնամիներն չէ կարելի բանեցնել: Միայն խնամի մարդ էր այս ողորմելի արարածները տես-

ածնելն մեծ թերթը «Երկուրդ» կը ծանուցանէ թէ՛ Արարութեան գործող նախարարը խոստացել է մեր պատրիարքի որ ամէն միջոց ի գործ պիտի դնէ այդ անդուկները դռնէլ տալ և յանձնելու:—Եւ, թնշուով շատոնց վանդակէ թնած ըլլալու է:—Սուրբանը նուիրեց Սրբուհի մայրապետին երեք հարիւր սակի օսմանեան: Այս Սրբուհի մայրապետը զիտեք որ որքանոց մը ունի, շատ կաշխատի և անցեալներն ձեր կողմէն ալ քիչ մը նուէր եկաւ:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄԱՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 4 մարտի: Ռուսաց 1 ըրբը լուրջին վրա արժէ 24¹/₃₂ պէնս, ռուսաց 100 ըրբը Համբուրգի վրա արժէ 204¹/₂ մարկ, ֆարիդի վրա 252¹/₂, Ֆրանկ: Ոսկի 8 ըրբը 23 կոպէկ, արծաթ 1 ըրբը 35 կոպէկ: Ներքին առաջին 5⁰/₁₀ փոխառութեան տոմսով արժէ 219¹/₂ ըրբը, երկրորդ 210 ըրբը: Պետական բանկի 5⁰/₁₀ տոմսով առաջին շրջանի արժէ 95 ըրբը 87 կ., երկրորդ 92¹/₂ ըրբը, երրորդ 92 ըրբը, հինգերորդ 91 ըրբը 62 կոպէկ: Բօրայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 4 մարտի: Ռուսաց դեսպանը Պարսկաստանի մէջ Զինովիկ Նշահակով և ասիական բաժնի կառավարչ իսկ այդ բաժնի փոխ-գլխավոր Մենիկով ռուսաց դեսպան Պարսկաստանի մէջ: Երէկ Պօտոմոսկայա եկեղեցում Մասիսի մարմին հանդիսար կատարվեցաւ: Հանդուցեալին կը թաղեն նրա Մինսկի կառուածքի մէջ: Սատակ ձինակոյտերի պատճառով երեք օր է Նիկոլայեվսկայա երկաթուղու գնացքները ռուսներու են երբեմն 12 ժամով: Ամենամեծ ձինակոյտերը Մոսկովայի և Տիբերի մէջն են:

ԼՆԵՎՈՒՆ, 4 մարտի: Երէկ Վեստմինստերի պարլամենտական շինութեան մէջ տեղահան ինքնավարութեան միւնիստրութեան բնակարանի մէջ ծայրիւն պատահեց: Վերանայեցան շինութեան առաջնամասը և ներքին յարկը: Հայթիւնը լսվեցաւ հա-

նում է, սիրտը տալիս ու վրայ է լինում, հաստալ լակ հիւանդներն չեն որ մարդ մի քանի միջիմարական և յուսատու խօսքերով դռնէ մարդկութեան թեթեւ մի պարզ կատարած լինի: Սրանց ինչ կարելի է ասել միթէ մարդ կարող է ասել, «գուք խնամ էք, խնամար էք, բայց յոյսերիդ մի կորէք, ձեր գոնուած յիմարանոցը շատ լաւ է, չլուրդ կը բժշկուիք»: Արդէն յիմարանոց բաւը բաւական է խնդր մարդը խնամեցնելու: Երբեք չեմ կարող մոռանալ հետեւեալ գէպը որ 15 տարի առաջ Պօլսոյ մարդած ժամանակ պատահեցաւ: Անունով յայտնի (բայց անունը հարկաւոր չէ) մի հայ վաճառական կար, որ պահում էր իր գրասենեակում իր անկող դանձապատի պաշտոնով. 25 տարեկան մի երիտասարդ էր անկող, շատ խելօք տղայ էր, բայց փոքր ինչ երկուտ և կասկածոտ բնաւորութեան տէր: Վաճառականը, այսինքն երիտասարդին քուսալը շատ կոպտ և տմարդի մի արարած լինելով՝ ամենամանջան բաների համար երիտասարդը նախատում էր, թշնամանում էր շարունակ՝ «գու խնամ էս, յիմար ես, խելագար ես, յիմարանոցի արժանի ես» ասելով, այնքան տապ որ երիտասարդը մի քանի տարից յետոյ իրօք խնամեցաւ և յիմարանոցում էլ մեռաւ: Սա պատմութիւնից ուղղում եմ կարգադրել նախ՝ մի մարդու ստեղծ ստեղծ «խնամ էս» ասելու փորձը: Խելօք մարդու չէ կարելի խնամ ասել, ուր մնաց ձեռնարկ խելագարին:

Գաւառացի վերստին մեր յիմարանոցը: Մարդ որքան քարափոր լինի, անկարելի է որ չը կալգի այն արտաշար տեսարանի առաջը, բայց մի և նոյն ժամանակ, երբ սրանց տրուած մարդկութեան խնամքին ակամատիս է լինում,—մարդասիրական պէտք է ասենք, որովհետեւ ոչ թէ օրական 5 ֆիօրին, այլ 100 ֆիօրինով անգամ քաշուելու բան չէ—տեսնողը ինքն էլ մասամբ իւր

մայրենի ժողովի մէջ և սարսափ պատճառեց: Կարծում են, որ ծայրիւնը զինամիտով է կատարված: Կատարվում են ֆինանսներին: Մի ուրիշ ծայրիւն եղաւ «Times» լրագրի խմբագրատանը, բայց վերանա չը պատճառեց:

ԿԵՆՍՏԱՆ, 4 մարտի: Ապրանքների տեղափոխելը Կեստամյի, Ուրդայի և Կոզանի մէջ չափազանց դժուարացել է ուղտերի հիւանդութեան և ձիւնի պատճառով: Գօրի մէջ սալապան մեքոօները այրեցին 20000 արկ թէյ:

ՕՐԵՆԲՈՒՐԳ, 4 մարտի: Բեռների կայարանը հացով լեքն է: Երկաթուղու տուած 15 շողեկաւորները և 200 վազօնները, համեմատելով բեռների քանակութեան հետ, չնչին միջոցներ են: Անձրեկները փչացնում են հացը, որ դիտաւորապէս ծածկված չէ բրեզներով: Եթէ ցրտը պատահէ, հարկաւոր կը լինի հացի շուախները երկաթէ գործիքներով կտորատելու:

ՏԱՇԿԵՆԸ, 4 մարտի: Թագադրութեանը ներկայ գտնվելու համար ուղևորվում են Խիվայի խանը, Բուխարայի էմիրը, որդին, Եսկաբէ-բէկ Կաշգարիւ ուրդին, Տուրքեստանի ժողովուրդների պատգամաւորները և Տաշկենտի քաղաքագլուխը:

ԲԵՐԼԻՆ, 4 մարտի: Պրուսական սէյմի նիստերը յետաձգված են մինչև ապրիլի 15-ը:

ՓԱՐԻՋ, 4 մարտի: Արժանտինի մէջ վախճանվեցաւ յայտնի գրող-սօցիալիստ Կալլ Մարիս:

ԲՈՒԿԱՐԵՍՏ, 4 մարտի: Սենատը հաւանք կառավարութեան քաղաքականութիւնը Գուստի հարցի վերաբերութեամբ:

ԼՈՆԴՈՆ, 4 մարտի: Ապացուցված է, որ տեղական ինքնավարութեան միւնիստրութեան մէջ ծայրիւն ֆինանսների գործն է, որոնք դրա համար զինամիտ գործածեցին: Պարլամենտը և միւնիստրութիւնները պահպանվում են բազմաթիւ պոլիցիայից: Ամեն տեղ պահապաններ են կանգնեցրած:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 5 մարտի: Նոր գինուորներին կանչելու համար երկաթուղով տեղ են նոր արտոնութիւններ, որոնք բոլորում են տնտեսական սկզբունքներից և ոչ թէ ընտանեկան, ինչպէս մինչև այժմ: Ս. Պետերբուրգի դուստրի միջնորդութիւնը Մոսկովայի մէջ Կայսրին և Կայսրուհուն ուղերձ

միջնորդութիւն է, կատարելապէս համոզուած լինելով որ խոհալի խնամքներն թշուառ վիճակը մեղմացնելու համար խնամաւորութեան միջոցներ է ձեռք առած յիմարանոցի մարդասէր վարչութիւնը:

Այժմ բաւական վարժուեցաւ խնամքներն, այնքան մէջնորդին ման եկաւ որ հետո ընտելացան, և սկսան «հիշատակ» քաղաքում վիճակները, ծիծաղել, ուղեղ և մի քանիսն էլ դուրս եկած ժամանակս ետիցս էին վազում:

Առաջնորդ «այժմ կատարվելին մասը գնալու ենք», ասաց, հարցրի թէ կատարվելին զոնէ կապուած են, «չէ, ընդհանրապէս ամենքն էլ ազատ են» պատասխանեց: Կը վախճում ասելու ամենակով «չառ լաւ, գնանք» ասացի, բայց այդ «չառ լաւ, գնանք» ասելու մէջ այնպիսի խելատուկ մի ձայն կար, որուն բարեբախտաբար առաջնորդը ուղարկութիւն անելու ժամանակ չուներ:

Համբան ասել է «բաւեր, բաւեր», յիմարանոցում էլ «գուներ», «գուներ»: Չափազանցութիւն չը լինի ասելու լինում թէ որքան խնամ կայ, այնքան էլ դուրս կայ, արարածներն: Անկասկած միջնորդը կատարվելին մասը գնալու համար մի բանի մեծակ զոնէ էլ բայց անկուց յետոյ մտնեք արահի նման մի տեղ, ուր 40-ի չափ մարդիկ կային, կամ լաւ եւ մարդու նման արարածներ. կարծես ամենքն էլ զերգմանից փախած կմախքներ, ուրուականներ էին. այստեղ սիրտս չը դիմացաւ, չէի կարողանում արանց երեւին մտիկ տալ. արանց զերգման տակալ էին, խնամքութեան ջերմաչափին վերին աստիճանին էին հասած, այնպիսի խոթոտ և սպառնալից աչքերով երեսիս նայում էին, որ վախիցս աչքերս դառն խոտարեցնում էի առաջնորդին բղանքիցը չը հետանալով: Մի քանի տղերս յիշողութեանս մէջ մնացին: Մինք

ներկայացնելու մասին, հիմնոված չը լինելով առաջնորդ սոցիալութիւնների վրա, մերժված է: Նոյնպէս անկարելի է համարված բացառութիւն կազմել յօդուա Ս. Պետերբուրգի այն պատգամաւորութեան կաղմակարութեան, որ պէտք է շնորհաւորէ Թագաւորին և Թագուհուն, որովհետեւ այդ գէպը չը հարկաւոր կը լինէր բացառութիւն կազմել յօդուա Մոսկովայի գեմմաօրի և Գուստի, նոյնպէս և այլ հին քաղաքների, որոնց անկարելի է բաւականութիւն տալ Կրեմլի չափերի պատճառով: Լրագիրները հարցրում են, որ Մոսկովի մահը կապ ունի կանցելարիայի կասսային գործադրութեան հետ, երբ Մոսկով միւնիստր էր: Միւնիստրութեան կասսան կազմվեցաւ օրէնքի հակառակ և կոնսուլի չէր ենթարկվում: Լուրերը նոր ինքնասպանութիւնների, կալանաւորութեան և վատնումների մասին անհիմն են: ձիւղ չէ նոյնպէս այն լուրը, իր թէ ինքնասպանութիւնից առաջ Մոսկովի այցելեց զատաստանական ջննիչը: Մինչև Մոսկովի մահը քննութիւն չէ սկսվել: Թագադրութեան պատճառով մայիսին նշանակված այգեպանութեան աշխարհահանդէսը և բուսաբանների կօնգրեսը յետաձգված է երկող տարվան:

ՍՈՑԻԱԼ, 5 մարտի: Պահպանողական նոր միւնիստրութեան է կազմված հետեւեալ անձինքներից. միւնիստր-նախագահ, ներքին գործերի և ֆինանսների միւնիստրութեան կառավարիչ Սօրբելի, պատերազմական,—Կառլաբար, հասարակական աշխատանքների, երկրագործութեան և առևտրի,—Խիլովի, արտաքին գործերի և դաւանութիւնների,—Կիրիակ Յանկով, արդարութեան,—Տիֆտարով և լուսաւորութեան,—Ագուրա:

ՓԱՐԻՋ, 5 մարտի: Այստեղ կալանաւորված են անիշխանականների 10 առաջնորդներ: Գաւառների մէջ կալանաւորութեանը շարունակվում են:

ՕՐԵՆՔՈՒՐԳ, 6 մարտի: Նաւագնացութեան սկսվելուց մինչև այժմ ուղևորվել են 52 շողեկաւոր, որոնք բեռնաւորված էին 5 միլիոն պուլից աւելի հացով:

ԿԻԵՎ, 6 մարտի: Պոլյանների ժամանակ բացի շաքարից և ճարձակից շատ գործեր են կատարված հարաւարեւմտեան երկրում կառուածներն գնելու, ծախելու և կապալով վերցնելու մասին: Գարձեալ 765 դարձականներ անցան Չերնիգովի նահանգից Նովոուսոլոյիսկի երկիրը:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

որ մաղերը ամբողջապէս փետտած և պիտիւն էլ երբեք էր, վեր վեր էր թռչում և բացադանում էր «մի բռնեք զիս, ես երկինք պիտի բարձրանամ» և խեղճ մարդ կէս արշիկից աւելի չէր կարողանում վեր բարձրանալ:

Մի ուրիշը որ 25 տարեկան մի երիտասարդ էր, դերժած, չափազանց նեխարացած, բայց աչքերը կայծակնաբայտ, շարունակ ման էր դալիս բարձրաձայն հաչիւններ անելով, բերանիցը միայն միլիոններ, միլիարդներ էին լուսում. խեղճ երիտասարդ, ասացի ինքնիրանս, պարզ բան է որ անփոփոխեան ամբողջ խելովիցած օղեղ էր լինէր *): Կային նաեւ ուրիշ զանազան տեսակ խելագարներ, որոնք այլ եւ չեմ յիշում թէ ինչ էին անում: Միայն միւս տեսած խնամքներն նման արանց հետ էլ կատարներ անել, ծիծաղել չէր կարելի: Առաջնորդը ցած ձայնով հարկւ թէ արտասանում էր մի քանի բառեր, որոնց արգելանոցի անասնոց մանչիւնների նման որոտաձայն պատահաններ էին տալիս, բոլորովին անխմատ: Մի քանիսը սկսան մեղ մօտենալ, եւ սկսայ ճըշմարիտ վախճալ, ձեռնարկան ինչ է նշանակում, կարծես առաջ տուտ էի վախճում, պարզապէս սկսայ դողալ, և ասացի առաջնորդին թէ, բաւական է դուրս ելնելը, իսկ նա ասաց, «մի վախենա՛ւ, քիչ էլ համբերեցէք, եւ ձեզ այժմ նոյն իսկ կատարութիւնը բռնած խնամ ցոյց պիտի տամ, այստեղ խնամապահներ թիւր խնամքից աւելի է, դուք ապահով կացէք, փորձեք չը կայ: Այս նշանաւ խօսքերն վրայ փոքր ինչ փոտահացած, կրկին հարցրի առաջնորդին թէ, ինչպէս կարելի է կատարել խնամքը այսպէս ազատ թողնուլ որ ման զան ասանց (chemise de force) սանահարիչ չապիկ հագցնելու:

(Կը շարունակվի)

*) Աստուած օգնական լինի հայ երիտասարդներին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմական դպրանոցի տեսչական պաշտօնը թափուր Գրիգոր Գ. Ա. Բաճաթյանի մահով զուրկ լինելու հետևանքով հոգաբարձութիւնը խնդրէ ցանկացողներին յայտնել հոգաբարձութեան իրանց յօժարութիւնը յայնչին առնել այդ պաշտօնը:

Գլխաւոր տեսչի պարտականութիւններն են, իբրեւ նրա մերձաւոր կառավարող՝ հրահանգել և պահպանող լինել ներքին բարեկարգութեան և յառաջագործութեան նորին ըստ ամենայն մասանց (կանոնադր. դպր. յօդուած 29):

Գլխաւոր տեսչին ընտրել յուսումնական և արժանաւոր եկեղեցականաց կամ աշխարհականաց աւարտելոց զընթացս ուսման ի ձեւարանի մայր Աթոռոյ ս. Էջմիածնի կամ ի բարձրագոյն ուսումնարանս տէրութեան (յօդուած 30):

Տեսչութեան համար թոշակ սահմանուած է տարեկան 1800 ռուբլի, բացի բնակարանէն և վաճառքից, ևս և միոյ առարկայի ուսուցչութեան ուժէն, որ ունի ստանալ առանձին ըստ թուոյ դասուցն (յօդուած 31):

Գլխաւոր տեսչի պաշտօնը և գործեան ծանօթանալ ցանկացողներին կը յուղարկուի նրա տաղարի կանոնադրութիւնը:

Նախագահ խորհրդոյ հոգաբարձուաց Սուբխա Նախկոյան:

1—3

ԴՌՈՒՄ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԻ ՏԱԿԻՑ
ՊԸԼԸ-ՊՈՒՂԻ

Գրեց Մ. Վ. ԲԱՐՈՒԹԱՐԵԱՆՅԱՆ: Գինն է 1 ռուբլ: Ծախփում է բոլոր զրաւաճառանոցներում:

1—5 (1)

SANTAL DE MIDY
Pharmacie de 1^{re} classe, à PARIS
PERMIS EN RUSSIE

ՍԱՆԹԱԼ ԸԸ ՄԻՏԻ
Փարիզի տաղանդաւոր դերագործ
Պր. Միտի
Ուսումնարանում ընդունւած:

Պատկերի Սանթալ Սիմիդին կոչուած դեղին գույնի մէջ պարունակող այս քաղցրոյնը, քաղցրահամ և քիչակէտ բաղադրեալ քաղցրոյնից անբաժանաւոր սակի կերպով ազդու են: Այս քաղցրոյնը երբեք աւուր մէջ կը թշնման ամէնից շատ ցուրտ և հնազանդ հոտովները առանց ո՛ր և ինչէ կեղծքիմիայի օգնութեան, չեն հոգնեցնում ստամոքսը և քաղցրահամ կամ քիչակէտի նման մէջին հոտ չեն տալիս:

Ծախփում է Փարիզ, Վիլիէն փողոց
№ 8 և զիւստը դերագործանաց մօտ:

Թիֆլիսում դեղատան ապրանքների վաճառման կողմաներն ընկերութեան մէջ և Շահ-Պարսեանցի մօտ:

(8. 15. 24) 4—9

ԾԱԽՎՈՒՄ Է

ԿՈՎԱՍՏԱՆ ԳՐԱԽԱՆՈՒԹԻՄ

ԾԱՂԿՈՒՆՔ

(Թարգմանական. Ա. Մ. Ե. Պ.)

Ազնիւ թղթի վրա գեղեցկատիպ:

Գինը 25 Կ:

ՊԱՏԻ ՈՒՆԵՄ

Յայտնել յարգելի հասարակութեանը, որ իմ աշխարհի խանութի մէջ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻՍ, Գօրցօվայա փողոցի վրա № 138 ՆԵՐՔԻՆ ՅԱՐԿԻ մէջ, Գալիցիոյ մահուդէ խանութի հանդէպ մանր և մեծ քանակութեամբ ծախփում է ամենաբարձր տեսակի ԿՐՈՒՊԱՆ ԵՒ ԿՐՈՒՊԱՆՍԿԱ 1 և 2 տեսակի և ՎԱԼՅՈՎԱՒ ԱԼԻԻ 2ՈՒՐԵԼԻՆ և ընկ. գործարանից Բոստօլ Գօնի վրա ԱՄԵՆԱԶԱՌԱՐ ԳՆԵՐՈՎ: Օրինակ աշխարհի փոխարէն ևս ծախփում են այն դեղով, ինչ զնով ուրիշները ջուրներով են ծախփում:

ԱՐՇԱԿ ՏՈՒԼԱԵՎ
2—4 (1)

SIRUP DE RAIFORT IODÉ
De GRIMAUD & Co
Pharmaciens à Paris
AUTORISÉ EN RUSSIE

ՌԷՏՈՒ ԻՕՏԷԻ ՍԻՐՈՊ
Փարիզի Գրիգոր և ընկ. Գրիգորյանաց

Այս դեղը գործածվում է քան տարեկան ի վեր երախայց հիւանդութեանց դէմ ձկան լուլի և անթիբիոտիկ բնութիւնով օրոպիտիկ և նշանաւոր արդիւնքներ է տալիս:

Երախայց վիճակը այն և այլու եղանակով խաւը, և մարմնից, գլխի և երան վրայ երեւոյցած բաղադրանքով վերքերը բժշկելու համար արանց տալիս ազդու դեղ չկայ: Միև նոյն ժամանակ բաց է անամ տխրեալը, զորոյցում է մեղք, բժշկում է մարմնից մեղք կոթիւնն ու ցանառութիւնը և ապա է երախայց իրանց բնական դուրս թափումն ու արթնութիւնը: Սա անպակտ դեղ մ է ծծող երախայց մարմնից և զիւստը վրայ երեւոյց վերքերը բժշկելու և արեւոր մաքրելու համար:

Ծախփում է Փարիզ Վիլիէն փողոց
№ 8. T

Թիֆլիսում դեղատան ապրանքների կով. կաս. ընկ. մէջ և Շահ-Պարսեանցի մօտ:
(8. 15) 3—6

КЕЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

25—50

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա:

Միակ գործակա ԼԻԱԿԱՆ Խ տեղը կան ամեն իր համար մեծ ԳՐԻՉՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱԲ, ներ, զմուռ, ՄԱՐԻՆԵՐ, պենալ, ներ, ծխախոտի ներ, ածելիք, ս ներ, ԲԱԶԿԱՌՈՐ, րարիւ կախելու ՏԻՆԵՐ, վզազօտի լուրին ԱՆԳԱՆՈՒԹ: Նոյն տեսակ ձեռագրեւ ձեռնակութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ: Կան թուղթ, տետրակ, ՏԻՆԵՐ, քարեգ, ԳՐԶԱԿՈՐ, քսակ, ամաններ, ՄԿՐԱՏ, րոյններ, խալիւա, ՄԱՀԱԿԱՒ, վե համար իրեր, ԳՕ ներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, բրտանական մետաղից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԶԱԿԱՆԵՐ, ջրամաններ, երես լուսնաւոր ամաններ, Ֆիլտրա, կրան, շիշներ, այգու մղաններ, շորի շէտակա, գլխի, երկաթէ թելերից, ձիւ համար: Մա կենսաօջիւր: Բժշկական թուղթ վատերկրողե տի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:
4—100

ԲԱՅՅԻ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Գինն է 2 ՐՈՒԲԼ

Գիրքը բաղկացած է 546 երեսներից և աւելի մեծ դիրք ունի, քան թէ հեղինակի միւս հրատարակութիւնները:

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը. — Կենտրոնական գրալաւառանոցում. — Կովկասեան գրալաւառանոցում. — Կ. Շահ-վերդեանի պալիլիօնում. — Կ. Շահ-ճինեանի և Տէր-Յովսէփեանի ծխախոտի մազաղիններում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. ԹԻՓԼԻՍԻ. Редакция „Мшакъ“, А. МЕЛИКЪ-АКОПЯНУ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ. ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՌ ՓՈԳՐԱՅՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԻԱ № № 156, 157, 158,

159 և 160.

Համեմատեցէք թէ՛

1 ռ.	10 Կ.	Թէ՛ չի հետ ամեն տեղ	1 ռ.	30 Կ.
1 "	20 "	" " " " " "	1 "	60 "
1 "	40 "	" " " " " "	1 "	90 "
1 "	60 "	" " " " " "	2 "	20 "
1 "	80 "	" " " " " "	2 "	50 "

ամենալաւը 2 ռ. " " " " " " 3 " —

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօխաղի և Կալաօ-Ֆրայ Էսենցիայի, Պալմերի բիսկիտների, Բազրի կօնֆեկաների, Շեֆերդի դանակների, Տուրնելի գրիչների, Գաուի հրացանների, Վեկիլի բեկովիլներ, Բարնսթիլ թամբերի, Մեկիլի ամանների, Կոլմանի կրակաւ և մանանիկ, Շվարցի ալրօմներ և այլն և այլն:


78—100

Իմ հանգուցեալ վաղաժամ եղբայր Առաքել Բաբայան Բահայեանի մանրամասն կենսագրութիւնը զրաւ ունեւ հրատարակելու համար: Բայց կամենալով աւելի լիակատար և մշակուած դուրս բերել խնդրում եմ բոլոր ծանօթներից և բարեկամներից՝ հաղորդել ինձ անյապաղ՝ տեղեկութիւններ հանգուցեալի կեանքի և նրա հասարակական գործունէութեան վերաբերեալ: Հասցէս—Шуш, Николаю Б. Багатурьянц.
Դիկոյա Բ. Բահայեանց
2—3

ВО ВТОРНИКЪ 8 МАРТА.
ВЪ ЗАЛѢ ТИФЛИССКАГО
КРУЖКА,
Будетъ данъ
М. И. Михайловымъ
КОНЦЕРТЪ

Билеты и программу концерта можно получить въ Музыкальномъ магазинѢ Ланко и у швейцара Кружка.

2—2



Մի հարու համար 8 ռուբլոյց, երկու հարու համար 14 ռ., մահճիւններ ծովային խոտով լցված 6—9 ռ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ. Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատասաքաղներով երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թիւր, աղամարդիկներ և կանանց ԹԱՄԲԵՆ, մատուցարաններ, ՎԷՐՆԱԿԱ, բեկովիլներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալրօմներ, կօնֆեկաներ, ԹԷ՛ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ:

44—100

ԳԱԼԵՐԻԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԳՎՈՐՅՈՎԱՅԱ ՓՈԳՐՈՅ
ՊԱՀԵՍ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.
СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախփում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիենայի ԹՕՆԷՓ Փարիլայի ՄԷԲԵԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՈՄ ԵՐԱՆԱԿՆԵՐ հայկերի համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, Բեկիլայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՄՈՒԻՑ քար, ԹՈՒՋԵՍ ԱՄԱՆՆԵՐ էմալով ՆԻԹՐԱՓ ԳԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ:

ՎԻԵՆԱՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
L'ORIENTAL

ՖԻԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

„Ժուրնալ ԳՕրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակում այդ նոր լի գիրքը: „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարեկանը 4 ռուբլ: Գրել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում գրելով հեռեւ հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt.